Ուստի շնորհում ենք Ձեզ Մեր ազամանդեայ կենդանագիրը, որ ամենառաջնակարգ պետական պաշտօնեաների պարգևատրութեան բարձրագոյն նշանն է, և առաքել Ձեզ այդ ի ձեռն Գերապատիւ և մեծարելի Հովուին Պարսկաստանում և Հնդկաստանում բնակող Հայոց՝ Գրիգորի, որ յայտնի է իւր պարկեշտ վարքով և կատարեալ բարեմտութեամբ։

Այս արտաքին պատուոյ նշանը թող Ձեր Սրբութեան առջև յայտարար լինի Մեր թանգագին ուշադրութեան և սրտագին հաճութեան առ Ձեր անձնաւորութիւնն և միանգամայն քաջալեր Ձեր հանդերձեալ բարերար գործունէութեան։

Մի՛ մոռանաք Մեզ Ձեր աղօթքների մէջ. իսկ Մենք մաղթել էինք և մաղթում ենք Ձերդ Սրբութեան կալ և մնալ ողորմութեամբն Աստուծոյ Հովուապետ և Ղեկավար Հայաստանեայց Եկեղեցւոյ։ Նէվուալ ամիս 1305 թ. (1888)։

Սեպտ. 24-ին Ս. Գէորգայ տօնի օրն նախընթաց տարիների նման փառաւոր հանդիսով կատարուեցաւ Մայր Աթոռոյս Ճեմարանի բացման ԺԴ. տարեդարձն։ Զկնի Ս. Պատարագի միաբանութիւն Մ. Աթոռոյս մերձաւոր գեղերից եկած ուխտաւորք և Վաղարշապատու ժողովուրդք համախմբեցան Ճեմարան. հանդիսարանում սկսեցաւ սովորական հոգեհանգստեան պաշտօն Երջանկայիշատակ հիմնադիր Գէորգ Դ. Կաթողիկոսի. ապա սկսաւ տարեդարձի հանդէսն ներդաշնակ երգերով և ճառերով. նախ Պ. Արշակ Նահապետեան Տեսուչ Ճեմարանի կարդաց տարեկան տեղեկագիրն, ապա Ռուսաց լեզուի ուսուցիչ Պ. Յովհաննէս Յովհաննիսեանց կարդաց մի գեղեցիկ ճառ զոր ընթերցողներ կըգտնեն սոյն թուի մէջ, Պ. Տեսչի տեղեկագրի հետ։ Յետ որոյ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս նոյն օրուան պատարագիչն մի հմտառօտ ատենաբանութեամբ բացատրեց Ս. Էջմիածնի բարոյական կապն, որով ի սփիւռս աշխարհաց ցրուեալ հայեր պինդ հանգուցով կապուել են Ս. Էջմիածնի հետ, և յարեց թէ «յորէ հիմնարկութեան Ս. Էջմիածնի եղել են Էջմիածնում ժառանգաւորաց ուսումնարաններ, որք երբեմն յաջող հանգամանքի մէջ մեծ փայլ տուած են ազգին, քաջուս հոգևորականներ հասցնելով և երբեմն ժամանակի դառնութեամբ նուա-

զել են մինչ սորանից 15 տարի յառաջ հանգուցեալ հիմնադիրն Երջանկայիշատակ Գէորգ Դ. բազդ ունեցաւ այս հոյակապ շինութիւնն հաստատել ի պարծանս ազգիս քաջուս հոգևորականներով և ուսուցիչներով պայծառացնել, Հայաստանեայց Եկեղեցին և Ազգն. և այժմ Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Մակար Կաթողիկոս ամենայն Հայոց իւր ուշադրութեան առարկայ դարձնելով սոյն ազգօգուտ Հաստատութիւն, աշխատումէ աւելի փառաւոր յառաջադիմութեան մէջ տեսնել յարատև։ Եւ օրհնեալ է Աստուած որ, այս տարի ձեմարանիս աւարտողներն յանձն առին հոգևորականութիւնն, որով պիտի պսակեն թէ Երջանկայիշատակ Հիմնադրի, թէ Վեհափառ Հայրապետի և թէ համայն ազգի յոյսն ու նպատակն. և օրհնեց Պ. Պ. ուսուցիչներին և աշակերտներին։ Յետ որոյ Դեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս յորդորելով զամենք յերախտագիտութիւն առ Երջանկայիշատակ Հիմնադիրն, առ Վեհափառ Հայրապետն ազգիս և առ Ազգն, կնքեց հանդէսն պահպանիչով։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԵՒՈՐ ՁԵՄԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1887 – 88 ԱՄԻ

ՍՐԲԱԳՈՒՄԱՐ ՀԱՐՔ

ԵՒ ՄԵԾԱՐԳՈՑ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Այսօր Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Հայոց Հոգևոր Ձեմարանը տօնումէ իւր չորեքտասաներորդ տարեդարձը։

Ձեմարանս իւր գոյութեամբ պարտական է Երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ. ամենայն Հայոց Կաթուղիկոսին, իսկ իւր շարունակութեամբ՝ մեր Աստուածարեալ Տ. Տ. Մակար Վեհափառ Հայրապետին, որ Ս. Գրիգորի՝ Հայաստանեայցս Լուսաւորչի, Գահը բազմելու օրից ի վեր ամեն տեսակ խնամք և ջանք գործ է դնում այս հաստատութիւնը իւր կոչման համապատասխան դրից մէջ պահպանելու համար։ Նորին Սուրբ Օծութիւնը Հո-